ամենից առաջ բնական ռեսուրսների պոտենցիալի հանդեպ տնտեսավարման և սպառողական հարաբերությունների անթույլատրելի մեթոդների հետևանքով առաջացած ճգնաժամային իրավիճակ:

Ջրի սպառման վայրագ վարվելակարգի պայմաններում և ունեցած պահուստների օգտագործման հնարավորությունների մասին վկայում են առանձին տարիներին Սևանա լճից ջրի բացթողնելու տվյալները: Այսպես, օրինակ, 1990 թվականի սկզբին ջրի մակարդակը 1897,81 հազ. մետր էր, բացթողնման ծավալը տարվա ընթացքում կազմում էր 207 մլն մ^3, որը զգալի չափով նպաստեց Սևանի մակարդակի բարձրացմանը, նրա նիշը 1991 թվականի հունվարի 1-ի դրությամբ բարձրացավ 20 սմ-ով և կազմեց 1898,01 մետր: Սկսած 1996 թվականից և ներկայումս լճից տարեկան ջրի բացթողնման ծավալի կրճատման նշանակալի նվազման միտում է նկատվում՝ 1998թ. 353 մլն մ^3-ից մինչև 250 մլն մ^3: Եղած հաշվարկների համաձայն՝ 1999 թվականին ջրի բացթողումը չպետք է անցնել 200 մլն մ^3-ից: Սակայն նկատենք, որ Սևանից ջրի կրճատման վերաբերյալ առձեռն փաստերը չի կարելի որակավորել որպես ջրային ռեսուրսների օգտագործման ուղղությամբ ձեռք բերված որոշակի հաջողություն: Դա սոսկ ուղղակի ցանքատարածությունների կրճատման հետևանքով ոռոգման ջրի պահանջարկի կրճատման վկայությունն է: Եթե այսուհետև հայ գյուղացին միայնակ մնա մշակվող հողի հետ, և դրա հետ մեկտեղ պահպանվի գոյություն ունեցող հարկային համակարգը և ոռոգման ջրի օգտագործման անչափ բարձր վարձը, ապա բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ արդեն առաջիկա հեռանկարում ոռոգելի հողատարածքները և, հետևաբար, նաև Սևանից ոռոգման կարիքների համար ջրի բացթողնման տարեկան ծավալը կհասցվի մինչև 120 մլն մ^3:

ՌԱՖԱՅԵԼ ԻՍԱԽԱՆՈՎ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոչարյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի առաջատար գիտաշխատող տ.գ.թ.

ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՌԱՑԻՈՆԱԼ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՌԵԳԻՈՆԱԼ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ժողովրդական տնտեսության զարգացումն ինտենսիվ ուղու վրա փոխադրելու արդի փուլում բնօգտագործման ռացիոնալացումը և հասարակական արտադրության ու բնական համակարգերի զարգացման միջև ներդաշնակության ապահովումը դասվում են հատուկ կարևորության և հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների շարքում: Բնօգտագործման պրոցեսների կառավարման և գիտատեխնիկական առաջընթացի նվաճումների նյութականացման շնորհիվ միայն կարելի է ապահովել բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը և շրջակա միջավայրի վրա տեխնոգեն բարձր ծանրաբեռնվածությունը: Շրջակա միջավայրի վրա տեխնոգեն բարձր ծանրաբեռնվածության հետևանքով առանձին շրջաններում էկոլոգիական հաշվեկշռի խախտումներն ապացուցում են, որ գիտության և տեխնիկայի նվաճումների ներդրումը միշտ չէ, որ համաձայնեցվում է բնության զարգացման օրենքների հետ:

Ներկայումս ավելի հաճախ առանձին բնական համակարգերի էկոլոգիական իրավիճակի այս կամ այն չափով լարվածությունը պայմանավորված է բնական ռեսուրսների խիստ նվազեցման և շրջակա միջավայրի աղտոտման հետ: Ինչպես բնական ռեսուրսների, այնպես էլ բնության ինքնավերականգնման ունակության սահմանափակության փաստը ներկայումս դարձել է անժխտելի ճշմարտություն:

Գիտատեխնիկական առաջընթացի հիման վրա արտադրության համակողմանի ինտենսիվացման կուրսը պահանջում է պլանաչափորեն, խորը կշռադատվածությամբ ապահովել բոլոր տեսակի, այդ թվում բնական, նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացումը: Բնօգտագործման բնագավառում ինտենսիվացումը պահանջում է բնական ռեսուրսների համակողմանի և առավել լրիվ օգտագործման ուղիով տնտեսական շրջանառության մեջ այդ ռեսուրսներն ընդգրկելու աճի տեմպերի կանխարգելում, վերջնական արդյունքի միավորին ընկնող դրանց տեսակարար ծախսի նվազեցում: Այս ամենը սերտորեն առնչվում են արտադրության նյութատարության կրճատման պրոբլեմի հետ: Արտադրանքի բարձր նյութատարությունը ժողովրդական տնտեսության էքստենսիվ զարգացման անխուսափելի հետևանքն է: Երկրի տնտեսության մեջ արտադրանքի նյութատարության նվազեցման խնդիրը նոր չէ: Այդ բարդ խնդրի լուծման գլխավոր ուղին համակողմանի ռեսուրսախնայողությունն է, որը հենվում է գիտատեխնիկական առաջընթացի իսկապես հեղափոխական նվաճումների օգտագործման, մասնավորապես տեխնիկայի նոր սերունդների կիրառման, սկզբունքորեն նոր տեխնոլոգիական պրոցեսների ներդրման վրա:

Արդի գիտատեխնիկական առաջընթացի կարևոր առանձնահատկությունը բնության հետ առկա տեխնիկայի և տեխնոլոգիայի էկոլոգիական համատեղելիությունն է, որը ենթադրում է բնական ռեսուրսների համալիրային և բազմանպատակային օգտագործում, շրջակա միջավայրի վրա անտրոպոգեն գործունեության բացասական հետևանքների նվազեցում:

Հասարակությունը չի կարող ինքնակամորեն արգելակել ինչպես իր սեփական զարգացումը, այնպես էլ բնության վրա դրա ունենալիք ազդեցությունը: Հասարակության զարգացումով այդ ազդեցությունը ոչ թե կնվազի, այլ անխուսափելիորեն կաճի: Սակայն այդ չպետք է խախտի բնության գործունեության, ինքնակարգավորման և ինքնավերարտադրման բարդ մեխանիզմը:

Բնության և մարդու միջև փոխհարաբերությունների ներդաշնակության խնդիրը շատ բարդ է: Այդ առումով գիտատեխնիկական առաջընթացն անընդհատ առաջադրում է նոր հիմնախնդիրներ: Հասարակության

տրամադրության տակ եղած ռեսուրսները (այդ թվում և գիտելիքները) ժամանակի յուրաքանչյուր պահի համար եղել են և կմնան սահմանափակ:

Հասարակության զարգացման յուրաքանչյուր փուլում բնօգտագործման պրոցեսների նպատակաուղղված կարգավորման և կառավարման անհրաժեշտությունն ակնհայտ է: Ներկայումս, հավանաբար, հիմք չկա բանավիճել այն մասին, որ շրջակա բնական միջավայրի վրա արտադրության բացասական ազդեցության հիմնական պատճառը արտադրության մասշտաբների ոչ այնքան ընդլայնումն է, որքան դրա տեխնոլոգիայի անկատարելիությունը:

Առանձին ռեգիոններում էկոլոգիական իրավիճակի լարվածությունը հաճախ հետևանք է ոչ միայն արտադրության աճի, այլև նրա, թե ինչ ուղիներով է այն ապահովվում:

Բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և գիտատեխնիկական առաջընթացի նվաճումների խելացի կիրառման բազմաթիվ օրինակները վկայում են, որ արտադրության զարգացման գործընթացում էկոլոգատնտեսական պայմանների ամբողջական հաշվառման ուղիով կարելի է պահպանել և նույնիսկ բարելավել բնական միջավայրի վիճակը:

Ռացիոնալ բնօգտագործման բազմաթիվ հիմնախնդիրների շարքում հատուկ կարևորություն ունի դրանց ռեգիոնալ ասպեկտի ուսումնասիրումը: Բանն այն է, որ առանձին ռեգիոններն օժտված են միայն իրենց հատուկ բնօգտագործման առանձնահատկություններով: Այդպիսի օրինակ է բնօգտագործումը Հայաստանում: Այսպես. հանրապետությունը հարուստ է օգտակար հանածոների եզակի հանքավայրերով: Դրա հետ մեկտեղ այն բնութագրվում է հողային և ջրային ռեսուրսների սահմանափակությամբ, ռելիեֆի բարդությամբ, ինչպես նաև բնական շրջակա միջավայրի վրա ունեցած բարձր տեխնոգեն ծանրաբեռնվածությամբ: Բավական է նշել, որ Հայաստանում յուրաքանչյուր քառակուսի կիլոմետր տարածքին ընկնում էր անմիջապես ստացվող բնական ռեսուրսներից մոտ 10 անգամ ավելի հանքահումքային արտադրանք, քան ամբողջ Սովետական Միությունում:

Այսպիսի պայմաններում կարևոր նշանակություն ուներ հասարակական արտադրության ինտենսիվացման գլխավոր ուղղությունների ճիշտ ընտրությունը: Դրանք պետք է խիստ կոորդինացվեին հանրապետության բնական պոտենցիալի հնարավորությունների արդյունավետ օգտագործման և շրջակա միջավայրի պահպանության հետ:

Գիտատեխնիկական առաջընթացը, որն արդյունաբերական արտադրության հիմնական ուղին է, ըստ էության, ունի երկակի բնույթ: Բնակչության պահանջները լիովին բավարարելու նպատակով այն, առաջին հերթին, ուղղված է արդյունաբերական արտադրանքի կայուն աճի ձեռքբերմանը: Դրա հետևանքով հետզհետե աճում է բնությունից կորզվող և վերամշակվող հումքի և նյութերի քանակը, որն իր հերթին առաջ է բերում արտադրական թափոնների ավելացման և շրջակա միջավայրի աղտոտման վտանգ: Մյուս կողմից գիտատեխնիկական առաջընթացի շնորհիվ, սկզբունքորեն նոր տեխնիկայի և տեխնոլոգիական պրոցեսների կիրառմամբ, կրճատվում է միավոր արտադրանքի վրա ծախսվող հումքի քանակը:

Խոշոր և տեղային էկոլոգիական համակարգերում շրջակա միջավայրի վիճակի վատթարացման միտումը վկայում է, որ մինչև այժմ գիտատեխնիկական առաջընթացը հիմնականում նպատակաուղղվել է արտադրության տնտեսական արդյունավետության բարձր մակարդակի ձևավորմանը: Սակայն ներկայումս շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիրն այնպիսի կենսական նշանակություն է ստացել, որ հրամայական պահանջ է դարձել արդյունաբերական արտադրության աճի արագ տեմպերի ապահովումը խելամտորեն զուգակցել (բնական է, տեխնոլոգիական պրոցեսների ավանդական տեսակների պայմաններում), էկոլոգիական առանձին համակարգերի «ինքնապաշտպանման» հնարավորությունների հետ: Արտադրության ինտենսիվացման մակարդակը սովորաբար ընդունված է չափել արտադրության միջոցների արդյունավետության աստիճանով: Վերջինս զուգակցվում է բարձր որակավորված աշխատանքի օգտագործման չափանիշի հետ և պայմանավորված է գիտատեխնիկական առաջընթացի նվաճումների ներդրմամբ: Ներկայումս խիստ կարևոր է ճիշտ գնահատել գիտատեխնիկական առաջընթացի դերը, այն սերտորեն շաղկապել էկոլոգիական ամենաբարձր պահանջների հետ: Մեր կարծիքով, գիտատեխնիկական առաջընթացի դերի գնահատումը, ներկայումս գործող չափանիշներով, չի կարելի օբյեկտիվ համարել: Դրա ապացույցն է առանձին շրջաններում էկոլոգիական լարված իրավիճակների առաջացումը: Հարկ է նշել, որ շրջակա բնական միջավայրի պահպանման գործում գիտատեխնիկական առաջընթացի իրական դերը կարելի է որոշել արտադրական և բնական գործոնների (նույնիսկ, եթե դրանց միջև նկատելի կապ չկա), ամբողջ համալիրի միայն բազմակողմանի և խորը ուսումնասիրությունների միջոցով: Մի շարք դեպքերում բնական համակարգերի էկոլոգիական ճկունության հետևանքով քողարկվում է շրջակա միջավայրին պատճառված վնասը և նույնիսկ դրա բարելավման պատրանք ստեղծում: Նշենք նաև, որ բնական միջավայրի վիճակի համար մոնիտորինգի կազմակերպման գործում ժամանակակից անկատար մեթոդներն ու սարքերը թույլ չեն տալիս բացահայտել բոլոր այն բացասական հետևանքները, որոնք առաջանում են արդյունաբերական արտադրության ինտենսիվացման հետևանքով:

Նկատի ունենալով շրջակա միջավայրի վրա անտրոպոգեն ծանրաբեռնվածության հարաճուն մասշտաբները, առաջնահերթ կարևորություն պետք է տալ գիտատեխնիկական մշակումների սոցիալ-տնտեսական արդյունավետության այնպիսի մոտեցմանը, որի դեպքում կատարված ծախսումների համեմատ, հաշվի են առնվում թե՛ տնտեսական, և թե՛ սոցիալական արդյունքները: Այստեղ սոցիալական ասպեկտը ներառում է տնտեսական ոլորտի սահմաններից դուրս գտնվող այնպիսի արդյունքները, որոնք անուղղակի ձևով ներգործում են տնտեսական ցուցանիշների վրա:

Գիտատեխնիկական առաջընթացի արագացման արդի փուլը բնութագրվում է արտադրական պոտենցիալի զարգացման բավական բարձր մակարդակով, և, հետևաբար, արտադրության պրոցեսում բնական ռեսուրսների ներգրավման մեջ հնարավորություններով (շրջակա միջավայրի վիճակի վրա այստեղից բխող բոլոր բացասական ազդեցություններով): Արտադրության այս կամ այն տեսակի տնտեսական արդյունավետության

բացահայտումը, անկախ սոցիալական հետևանքներից, որակվում է որպես դրա գնահատման միակողմանի մոտեցում: Հասարակական արտադրության ինտենսիվացման սոցիալ-տնտեսական գնահատման իրականացումը մի շարք դեպքերում հանգեցնում է հակասական հետևանքների, երբ արտադրության մի պայմանի բարելավմամբ, վատթարանում են մյուսները: Գիտատեխնիկական առաջընթացի արագացման հիման վրա արտադրության ինտենսիվացման հիմնական ուղիները որոշելիս գերապատվությունը պետք է տալ նաև շրջակա միջավայրի պահպանման, բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և վերարտադրության միջոցառումների իրականացմանը:

Խոշոր մեքենայացված արտադրության ոլորտում գիտատեխնիկական առաջընթացի նվաճումների նյութականացման վերջին 30-35 տարիների փորձը ցույց է տվել, որ կենդանի աշխատանքի տնտեսումը, առանց համապատասխան առարկայացված աշխատանքի տնտեսման, չի կարող հանդես գալ որպես արտադրության ինտենսիվացման ընդհանրացնող գործոն: Արտադրությունը բարձր արտադրողական և բարձր արժեք տեխնիկայով հագեցման տեմպերի աճը հանգեցնում է թողարկվող միավոր արտադրանքի առարկայացած աշխատանքի ծախսերի ավելացմանը, այսինքն՝ ֆոնդատարության աճին: Գործնականում, ինտենսիվացման մակարդակի բարձրացումը հիմնականում ապահովում է կենդանի և առարկայացած աշխատանքի տնտեսմամբ: Սակայն կենդանի և առարկայացած աշխատանքային ծախսերի տնտեսումը պետք է դիտել որպես արտադրության ինտենսիվացման անհրաժեշտ, բայց ոչ բավարար տարրը: Արտադրության ինտենսիվացումը լիակատար պետք է համարվի այն դեպքում, երբ միաժամանակ ռացիոնալացվում են բնօգտագործման չափանիշները: Հակառակ դեպքում արտադրության ինտենսիվացումը դառնում է չավարտված պրոցես, քանի որ անտեսվում է բնական միջավայրին և ռեսուրսներին հասցված վնասը: Բնական է, որ արտադրության ինտենսիվացման պրոցեսում առաջնությունը տրվում է արտադրության միջոցների (աշխատանքի գործիքներ և առարկաներ) կատարելագործմանը, որոնց թվում վճռական դերը պատկանում է աշխատանքի միջոցների և, հատկապես, աշխատանքի գործիքներին: Աշխատանքի առավել բարձրարդյունավետ գործիքների կիրառությունը հանգեցնում է հասարակական աշխատանքի արտադրողականության և արտադրության արդյունավետության աճին: Սակայն պետք է նշել, որ միայն աշխատանքի արտադրողականության աճը դեռևս չի կարող ծառայել որպես արտադրության ինտենսիվացման մակարդակի չափանիշ: Արտադրության տնտեսական արդյունավետության բարձր ցուցանիշները հաճախ ապահովում են արտադրության կազմակերպման ավելի կատարելագործված ձևերի ներդրման ուղիով, արդյունավետ օգտագործելով ավանդական տեխնիկան և բարձրորակ հումքային բազան: Արդյո՞ք դա նշանակում է որ արտադրության արդյունավետության բարձրացումը դրա ինտենսիվացման ուղղակի արդյունքն է: Ո՛չ, քանի որ արդյունավետությունը մեծ մասամբ պայմանավորված է հումքային բազայի որակով (հանքահումքային ռեսուրսների մեջ հիմնական բաղադրամասերի բարձր տոկոսային պարունակությունը, հողի բերրիության բարձր մակարդակը և այլն), քան տեխնիկայի ու տեխնոլոգիայի մակարդակով: Արտադրության պրոցեսում չկատարելագործված տեխնոլոգիան հանգեցնում է բնական ռեսուրսների շռայլ օգտագործմանը (օրինակ, կոմպլեքսային հանքաքարերից հիմնական բաղադրամասերի ոչ լրիվ կորզումը և լցակույտերի մեջ ուղեկից բաղադրամասերի արտանետումները): Հիմնական բաղադրամասերի ցածր տոկոսային պարունակությամբ հանքաքարերի պարունակությամբ հանքաքարի պահեստավորման կազմակերպման ներկայիս փորձը հանգեցնում է դրանց օքսիդացմանը, լվացմանը, հողմահարմանը և, հետևաբար, դրանց անվերադարձ կորստին և շրջակա միջավայրի աղտոտմանը: Այսինքն, կենդանի և առարկայացած աշխատանքի միագումար ծախսերի կրճատումը դեռևս չի կարող բնութագրվել որպես արտադրության ինտենսիվացում, քանի որ այս դեպքում չի ապահովվում բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումն ու պահպանումը և անխուսափելի են դառնում թե՛ տնտեսական, և թե՛ սոցիալական կորուստները: Վերջիններիս վերացմանն ուղղված միջոցառումները հասարակության վրա շատ թանկ են նստում: Ուստի, առավել խելամիտ է կանխել շրջակա միջավայրի վրա բացասական ներգործությունը, քան հետո բազմակի անգամ ավել ծախսել շրջակա միջավայրը բարելավելու համար:

Արտադրության ինտենսիվացման հասկացության մեջ սոցիալական ասպեկտի հաշվառումը այժմ դարձել է ընդլայնված վերարտադրության անհրաժեշտ պայմանը: Արտադրության ինտենսիվացման փորձը ցույց է տալիս, որ դրա տեմպերի աճին զուգընթաց մեծանում են բնական ռեսուրսների հայտնաբերման, վերարտադրման և պահպանման հասարակական ծախսերը: Սկզբունքորեն կարևոր նշանակություն ունի տնտեսական և սոցիալական կորստի հաշվառման անհրաժեշտությունը: Հարկ է նշել, որ բնական ռեսուրսներ օգտագործող ձեռնարկությունների տնտեսական շահերը ոչ միշտ են համընկնում հասարակական շահերի հետ: Հաճախ ձեռնարկությանը էկոլոգիական նորմաների խախտման համար ավելի ձեռնտու է տուգանքներ մուծել, քան բնապահպան միջոցառումների իրականացման համար ներդնել հսկայական միջոցներ:

Արդյունաբերական ձեռնարկությունների կողմից բնական ռեսուրսների օգտագործման սահմանված կարգը և գործող տարիֆները դեռևս չեն նպաստում բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործմանը:

Հարկ է նշել, որ ներկայումս շրջակա միջավայրին մեծ վնաս են հասցնում այն արդյունաբերական ձեռնարկությունները, որոնք զբաղվում են հանքահումքային ռեսուրսների մշակմամբ: Ինչպես նշում է երկրաբանահանքաբանական գիտությունների դոկտոր Հ.Ավագյանը, Քաջարանի հանքավայրում մակաբացման աշխատանքների ժամանակ տարեկան արդյունահանվում են մի քանի մլն տ, այսպես կոչված, «աղքատ» հանքաքարեր, որոնք դատարկ ապարների հետ տեղափոխվում են թափոնակույտեր և անվերադարձ կորսվում են:

Արդյունաբերական ձեռնարկություններում բնական ռեսուրսների օգտագործումը առավելագույն չափով կրճատելու միակ ուղին այնպիսի տեխնոլոգիայի ներդրումն է, որը թույլ կտա կազմակերպել նրանց օգտագործման նվազագույն ծավալով ներփակ արտադրական ցիկլ: Ներփակ տեխնոլոգիական ցիկլերի ներդնումը անտարակույս երկարաժամկետ պրոցես է, որը կապված է այդ բնագավառում համապատասխան տեխնոլոգիական համալիրների ստեղծման հետ: Սակայն ակնհայտ է, որ անհրաժեշտ է լուծել շրջակա բնական միջավայրի պահպանության մի շարք խնդիրներ: Բնական ռեսուրսների ոչ ռացիոնալ օգտագործման և բնական միջավայրի աղտոտման հետևանքով ազգային հարստությանը հասցված վնասը դրսևորվում է որպես անընդհատ խոյացող միտում:

Այսօր, որքան խնայում են բնապահպան միջոցառումների ծախսերը, այնքան ծանր հոգսեր է ընկնում ապագա սերնդի ուսերին: Դրա ցայտուն օրինակն է հանրապետությունում լեռնահանքային գործունեության զարգացումը:

Հայտնի է, որ մի շարք արդյունաբերական ձեռնարկություններում անտեսվում են էկոլոգիական միջոցառումները, ինչի հետևանքով տեղի է ունենում բնապահպանական լարվածություն:

Արտադրության էկոլոգացման ծախսերի անտեսմամբ տնտեսական արդյունքի ապահովման ժամանակին թույլ տրված սխալը այսօր պահանջում է բազմամիլիոն լրացուցիչ ծախսեր, որոնք անհրաժեշտ են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության վերացման համար: Դա ցույց է տալիս, թե միշտ չէ, որ տնտեսական արդյունավետության գործող չափանիշները համապատասխանում են համընդհանուր շահերին: Ժխտվում է ոչ միայն էկոլոգների, այլև հենց տնտեսությունը վարողների այն տեսակետը, որի համաձայն բնապահպան միջոցառումներին հատկացված ծախսերը այնքանով են նպատակահարմար, որքանով, որ աղտոտումից առաջացած տնտեսական վնասի պակասեցումից ստացված արդյունքը գերազանցում է կատարված ծախսերի մեծությունը: Այդպիսի տրամաբանությունը աղտոտման պրոբլեմի գոհեիկ մեկնաբանման օրինակ է: Այստեղ կենտրոնական դիրք են գրավում ընթացիկ տնտեսական շահերը և ներդրվող միջոցների արդյունավետությունը, մինչդեռ այդ ներդրումների նպատակը կարծես թե մղվում է երկրորդ պլան: Նման մոտեցումը կարող է անտեսել, օրինակ, շրջակա միջավայրին հասցրած այն վնասները, որոնց հետևանքները բացահայտվում են ոչ միանգամից: Հանրապետական մակարդակով նման տրամաբանության հաստատումը անտարբերության կարող է հանգեցնել աղտոտման գլոբալ հետևանքների նկատմամբ:

Բնական միջավայրի վիճակի բարելավման գործում հասարակության մտահոգության օրինակ է Երևանում գտնվող Քանաքեռի ալյումինի գործարանի վերամասնագիտացման փաստը, որի շնորհիվ այդ գործարանը ալյումին արտադրողից դարձել է դրա խոշոր սպառողը:

Այնուամենայնիվ արտադրության էկոլոգացման կուրսը, չի նշանակում, թե բոլոր դեպքերում առաջնությունը պետք է տալ բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և բնական միջավայրի պահպանման հիմնախնդրին, և անտեսել մաքրման կայանների վերակառուցման-շինարարության և այլ բնապահպան միջոցառումների ծախսերի տնտեսական արդյունավետությունը:

Գիտատեխնիկական առաջընթացի նվաճումների նյութականացման արագացմանը զուգընթաց անհրաժեշտ է նախատեսել հասարակական արտադրության արդյունավետության աճի և դրա էկոլոգացման հավասարապես օպտիմալ տարբերակներ:

Ներկայումս լայնորեն տարածված է այն տեսակետը, թե հասունացել է ձեռնարկություններում համախառն ցուցանիշներից հրաժարվելու անհրաժեշտությունը: Մեր կարծիքով, շրջակա միջավայրի պահպանման գործում պետք է օգտվել հենց համախառն ցուցանիշներից: Մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա արտադրության վնասակարության աստիճանը գնահատելիս, հատկապես կարևոր է ճշգրիտ հաշվառել կեղտահոսքի, վնասակար արտանետումների, կոշտ թափոնների ծավալի և այլնի համախառն ցուցանիշները: Տեսակարար գնահատումները (օրինակ, թողարկվող միավոր արտադրանքի հաշվով թափոնների կրճատումը) թեպետ վկայում են տվյալ հարցում ձեռնարկության կամ ճյուղի մտահոգվածության մասին, սակայն չեն կարող վերջնական դրական արդյունք ապահովել, քանի որ արտադրության աճի տեմպերին համապատասխան ավելանում է արտադրության թափոնների բացարձակ ծավալը:

Բնական ռեսուրսների օգտագործման և շրջական միջավայրի պահպանության գործին նեղ գերատեսչական մոտեցման միտումը կանխելու էկոլոգիական լարվածությունը թուլացնելու նպատակով անհրաժեշտ է միասնական պետական քաղաքականության շրջանակներում ուժեղացնել տնտեսական և իրավական ներգործությունն այն հաշվով, որպեսզի շրջակա միջավայրի աղտոտմանը կամ բնական ռեսուրսների ոչ ռացիոնալ օգտագործմանը հանգեցնող տեխնիկայի և տեխնոլոգիաների կիրառումը դառնա ոչ շահութաբեր:

Շրջակա միջավայրի պահպանության միջոցառումների արագ և արդյունավետ իրականացումը պահանջում է ներդնել գիտականորեն հիմնավորված կարգավորիչ համակարգեր, դրանք ավելի սերտորեն շաղկապել ձեռնարկությունների շահերի հետ:

Բնապահպան համալիրային քաղաքականության հարցերի հետազոտության ժամանակ կարևոր է ընդգծել, որ արտադրության առանձին ճյուղերը բնական ռեսուրսների նկատմամբ ներկայացնում են տարբեր, իսկ երբեմն էլ՝ հակադիր պահանջներ: Այսպես, հիդրոէլեկտրակայանները, ըստ էության, ջրի սպառող չեն, սակայն այն օգտագործվում են որպես գրավիտացիոն էներգիայի կրողներ: Այստեղ կարևորը ջրային ռեսուրսների կուտակման ծավալն է, ջրի անկման ուժն ու հզորությունը, որն ապահովվում է բարձր ամբարտակների և ջրամբարների կառուցման շնորհիվ: Սակայն այս դեպքում վնաս է հասցվում գյուղատնտեսությանը, քանի որ ջրածածկվում են բերրի հողերը: Կամ, մետալուրգիայի և ջերմաէներգետիկայի համար էական նշանակություն չունի ջրի որակը, իսկ կոմունալ կենցաղային և սննդի արդյունաբերության համար այն գլխավոր գործոն է: Այստեղ կարևոր հանգամանք է նաև բնական համակարգերի փոխկապվածությունը: Զբաղվելով, օրինակ, ջրային միջավայրի պահպանման հարցերով, չի կարելի չմտահոգվել նաև մթնոլորտի պահպանմամբ, քանի որ վերջինիս աղտոտումը անխուսափելիորեն փոխանցվում է հիդրոսֆերային: Բնությունն իդեալական համալիր է, այդ իսկ պատճառով այն ճյուղերում, որոնք դրա հետ գտնվում են սերտ փոխազդեցության մեջ, պետք է խստացվեն համալիրայնության պահանջները: Այսպես, ներկայումս աշխարհի զանազան երկրների ընդերքից տարեկան արդյունահանվում են հարյուրավոր մլն տոննա ծծումբ՝ ինչպես բնական, այնպես էլ հանքային վառելիքի և մետաղի սուլֆիդային հանքաքարերի միացությունների ձևով: Արդյունահանվող հումքի վերամշակման ժամանակ ծծմբի մի մասը մթնոլորտ է արտանետվում: Դրա հետևանքով մթնոլորտում բազմաթիվ անգամ ավելանում է ծծմբի պարունակությունը, որը դառնում է ծծմբաթթվի և, հետևաբար, թթվային տեղումների առաջացման պատճառ: Հասկանալի է, որ վերջիններս զգալի վնաս են հասցնում գետերին և լճերին, բուսակա-

նությանը, մետաղե և քարե կառուցվածքներին: Սկանդինավյան երկրներում և Հյուսիսային Ամերիկայի որոշ շրջաններում քաղցրահամ ջրերի թթվայնության բարձրացման հետևանքով մի շարք լճերում մասնակիորեն կամ լրիվ վերացել են ձկնային պաշարները, ընդ որում, թվայնության նկատմամբ առավել զգայուն են ամենաթանկարժեք տեսակի սաղմոնները: Մակերևութային և գրունտային ջրերի թթվայնության ավելացումը հանգեցնում է մի շարք ծանր, թունավոր մետաղների միգրացիոն ունակության բարձրացման և, համապատասխանաբար, խմելու ջրի մեջ դրանց խտացմանը: Այսպիսով, մթնոլորտում ծծմբի միացությունների առկայության նեգատիվ հետևանքներն ակնառու են: Իսկ վառելիքի և գունավոր մետաղների արդյունահանման աճի միտումը պահպանվելու է նաև առաջիկա ժամանակներում: Ինչպե՞ս լուծել այս հիմնախնդիրը: Կարծում ենք, առաջին հերթին, ծծմբի արդյունահանման այնպիսի անթափոն ու սակավաթափոն տեխնոլոգիաների մշակման և լայնորեն ներդրման ուղիով, որոնցով հնարավոր է կլանել արտանետվող գազերից ծծմբի միացությունները: Դրան զուգընթաց, անհրաժեշտ է էներգետիկ նպատակների համար զգալիորեն ավելացնել հիդրոռեսուրսների, քամու ուժի, արեգակնային և երկրաջերմային էներգիայի օգտագործումը:

Ինչպես տեսնում ենք, բնությունը վերականգնվող էներգառեսուրսների օգտագործման գործում տալիս է հսկայական հնարավորություններ և, որ շատ կարևոր է, բոլորն էլ օժտված են էկոլոգիապես մաքուր տեսակներով:

Այսպիսով, արտադրության ինտենսիվացման պայմաններում տնտեսական գործունեության ռեսուրսապահովումը պահանջում է առավել չափով հաշվի առնել բնական ռեսուրսների օգտագործման էկոլոգիական հետևանքները: Արտադրության բնապահպան ասպեկտների թերագնահատումն անխուսափելիորեն հանգեցնում է շրջակա միջավայրի վրա տեխնոգեն ծանրաբեռնվածության ավելացմանը և, հետևապես, էկոլոգիական համակարգերի հավասարակշռության խախտմանը:

ԳԵՎՈՐԳ ԽԱՆԻԿՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոչարյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, տ.գ.դ., պրոֆեսոր
ՍԱՐԳԻՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ
տնտ. գիտ. թեկ.

ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑԸ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՎԵՐԱՁԻՆՈՒՄԸ

Ավելի քան կես դարի տնտեսական զարգացման պատմությունը նախանշեց տնտեսական զարգացման նոր վեկտոր՝ տնտեսական աճ՝ բացառապես հիմնված գիտատեխնոլոգիական առաջընթացի վրա: Ինչի արդյունքում, ինտեգրման և գլոբալացման գործընթացների հետ մեկտեղ, առանձին երկրների միջև առաջացավ տեխնոլոգիական խզում, որը դրսևորվեց երկրների միջև տեխնոլոգիական զարգացման էական տարբերությամբ: Ուստի, նոր հազարամյակի շեմին, տեխնոլոգիական առաջընթացը հանդիսացավ ոչ միայն տնտեսական աճի և կյանքի որակի բարձրացման երաշխիքը, այլև համաշխարհային ասպարեզում գերիշխանության հասնելու հիմնական եղանակը:

Տեխնոլոգիական առաջընթացն աշխատանքի և կապիտալի հետ զուգահեռաբար դիտարկվում է տնտեսական աճի և հասարակության բարեկեցության բարձրացման երրորդ հիմնական գործոն: Այն ոչ միայն փոխել է արտադրության կառուցվածքը և մասշտաբները, այլ նաև ունեցել է նշանակալի գլոբալ ազդեցություն կյանքի որակի, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա: Տեխնոլոգիական առաջընթացն իր նեգատիվ հետևանքներով հանդերձ՝ շարունակում է մարդկության համար մնալ տնտեսական աճի և կյանքի որակի բարձրացման, այսօր և ապագայում այլընտրանք չունեցող ուղին:

Ներկայումս նոր գիտելիքների և տեխնոլոգիաների ստացումը և վերջիններիս օգտագործումը սոցիալ-տնտեսական զարգացման նպատակով անմիջականորեն որոշում է երկրի տեղը համաշխարհային հանրությունում: Այսպես. արդյունաբերապես զարգացած երկրներում համախառն ներքին արդյունքի աճի 80-95 % բաժին է ընկնում նոր գիտելիքներին և նորարարություններին, որոնք իրենց մարմնավորումն են գտնում նոր արտադրատեսակների, տեխնիկայի և տեխնոլոգիայի մեջ, ինչը փաստում է այն մասին, որ այդ երկրները շարժվում են ինովացիոն էկոնոմիկայի ուղիով: Այդպիսի երկրներից հատկապես կարելի է առանձնացնել ԱՄՆ-ի և Ճապոնիայի տնտեսությունները, որոնց բաժին է ընկնում գիտատար արդյունքի /քաղաքացիական/ միջազգային շուկայի՝ համապատասխանաբար 36 և 30 %:[1]

Տեխնոլոգիական առաջընթացի, որպես տնտեսական աճի հիմնական գործոններից մեկի, խնդրին նվիրված հետազոտությունները և վերլուծություններն ունեն ավելի քան կես դարի պատմություն: Այսպես. դեռևս քսաներորդ դարի 50-ականների վերջերին ԱՄՆ-ի տնտեսական աճը երկարաժամկետ հատվածում ուսումնասիրող մի շարք հետազոտողներ հանգեցին այդ ժամանակահատվածի համար անսպասելի եզրակացության. ԱՄՆ-ի տնտեսությունում նկատվող տնտեսական աճի առյուծի բաժինն իրականանում է ոչ թե ի հաշիվ աշխատանքի և կապիտալի ծախսերի մեծացման, այլ ի հաշիվ տեխնոլոգիական առաջընթացի այս կամ այն ձևի /էկզոգեն կամ էնդոգեն/: Շնորհիվ Նոբելյան մրցանակակիրներ Յա.Տինբերգենի, Ռ.Սոլոի, Ջ.Խիկսի և այլ հետազոտողների՝ էմպիրիկ այդ դիտարկումները գտան իրենց արտահայտումը տնտեսագիտական տեսություն-

[1] Фомичев.Ю.П Государственная политика в области правовои охраны, защиты, управления и коммерциализации интеллектуальной собственности. www.catalysis.nsk.su